ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐ

(2024-2025 ուստարի)

Ողջո՛ւյն, սիրելի՛ մասնակից
Հայ գրականության օլիմպիադան նվիրվում է Ծմակուտի քուրմի՝ Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 90-ամյակին, և քանի որ տարին հայտարարվել է Մաթևոսյանական, դու էլ սրբազան աղոթքով խնկարկի՛ր նրա անմահությանը։

«Գրականություն պետք է մտնել պատասխաններով։ Պատասխաններով»։
Հրանտ Մաթևոսյան

10-րդ դասարան

1. Ո՞վ է պատմում Կանաչ հովտի հրաշալի ասքը։ Ծանո՞թ ես այդ ասքին։ Խոսի՛ր հեղինակի մասին, ներկայացրո՛ւ կարմիր պառավ ձիու և գայլի անօրինակ պայքարը՝ հանուն ապրելու։ Մեկնաբանի՛ր գորշ գայլի և կարմիր ձիու մենամարտը, շների և գայլի մենամարտը։ Ի՞նչ է խորհրդանշում սև շրջանակը։ Գրի՛ր հեղինակին բնութագրող շրջասույթը։

10 մ.

2. Ո՞վ է բնութագրվում մեծ քանաքեռցի, Հայաստանի վերքի երգիչ շրջասույթներով։ Ի՞նչ գիտես այդ հեղինակի մասին։ Գրի՛ր երկտող՝ նրան բնութագրող պոեմից։ Խոսի՛ր հեղինակին տանջող վերքի մասին։ Հեղինակի խոսքերով բնութագրի՛ր այդ երկի հերոսին և գրի՛ր՝ ճանաչո՞ւմ ես այսօր այդպիսի նվիրյալ հերոսի։

10 մ.

3. Պատմի՛ր Մուրացանի մասին։ Գրի՛ր գրական կեղծանվան մասին։ Ե՞րբ է գրել իր գլուխգործոցը, ո՞ր պատմիչներից է օգտվել։ Պատմական կերպա՞ր է արդյոք Ասպրամը։ Հերոսներից ո՞ւմ կերպարում ես տեսնում Մուրացանին. կա՞ անձնական որևէ աղերս։ Ներկայացրո՛ւ Ցլիկ Ամրամին. մեղադրի՛ր կամ արդարացրո՛ւ նրա դավաճանությունը։

10 մ.

4. Նշի՛ր հետևյալ ստեղծագործությունների հեղինակներին և վերլուծի՛ր որևէ մեկը (Քո՛ ընտրությամբ)։ «Հայոց լեռներում», «Հայրենի տուն», «Ազատություն», «Մանկության օրեր», «Արաքսի արտասուքը», «Իմ ցավը», «Ես իմ անուշ Հայաստանի», «Մի՞թե վերջին պոետն եմ ես», «Ավելորդը», «Սպիտակ ձին», «Գարնանամուտ»։

10 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան